

«ՉԵԻԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԸ»

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1978, ք. 1-2, էջ 184-194)

«Formgeschichte» կոչուած դպրոցը, 1919-1922 տարիներու շրջանին, գլխաւորապէս Գերմանիոյ մէջ, հրապարակ նետեց Աւետարանները ուսումնասիրելու նոր դրութիւն մը:

Վերոյիշեալ դպրոցին գլխաւոր ներկայացուցիչներն են. M. Dibelius, K. L. Schmidt, R. Bultman, M. Albertz, G. Bertram, եւն., որոնց նպատակն եղած է բացատրել Աւետարաններու ծագումը եւ ձեւաւորումը, անոնց մէջ գտնուող ձեւերու գոյութիւնը եւ զարգացումի փուլերը¹:

Ինչպէս որ երկրաբանը՝ երկրի զանազան խաւերը, կամ լեզուաբանը՝ բառերու զանազան փոփոխութիւնները կ'ուսումնասիրէ, այսպէս ալ վերոյիշեալ գիտնականները, որոնց «ձեւաբան» անունը պիտի տանք, կ'աշխատին Աւետարաններու «բրածոյաբանութիւնը» ուսումնասիրել, ցոյց տալու համար թէ Յիսուսի մահէն ետք, մօտաւորապէս երեսուն տարիներու ընթացքին, ինչպիսի՝ փոփոխութիւններ կրած է Աւետարաններու բերանացի աւանդութիւնը, գրի առնուելէն առաջ:

X. Léon - Dufour, գեղեցիկ պատկերով մը, ձեւաբաններու ձեռնարկը կը նմանցնէ շողանկարումի այն գործողութեան, որուն շնորհիւ, կարելի կ'ըլլայ նշանաւոր նկարիչի մը՝ Վան Էյքի մը, Ռամպլանտի մը պատարանին ետեւ, յայտնաբերել նկարին յաջորդական վիճակները. ամէնէն առաջ նախախաւը, յետոյ նորոգութիւնները կամ աւելի ուշ շրջանի նկարիչներու կողմէ եղած հպումները, եւ հոսով՝ բուն նկարը եւ նոյնիսկ յաջորդական նախագիծերէն մինչեւ առաջին գծադրութիւնը²:

1. «Ձեւերու պատմութեան դպրոց»ին սկզբունքները կազապարուած են H. Gunkelի Հին Կտակարանի, յատկապէս Ծննդոց գրքի եւ Սաղմոսներու խմբագրութեան մասին՝ «Գրական սեռեր» անունով յայտնած գաղափարներուն վրայ:
2. X. LEON - DUFOUR, L'Evangile et les évangiles, Paris 1948, էջ 89:

Գիշ թէ շատ սոյն ձեւի աշխատանք մըն է որ կ'ուզեն կատարել ձեւաբանները: Ճանչնալ Յիսուսը, ո'չ թէ Աւետարանիչներու ներկայացուցածը, այլ ամենահին աւանդութեան մէջ պահուածը:

Թէեւ ձեւաբան հեղինակներու տեսակէտները երբեմն իրարմէ կը տարբերին եւ իրարաւշտ կեցուածքէ հեռանալով՝ չափազանցութիւններու մէջ կ'իյնան, սակայն, միւս կողմէ, անոնք ունին շահեկան տեսութիւններ, որոնց համար կ'արժէ քիչ մը աւելի մօտէն հետաքրքրուիլ իրենց բերած նորութիւններով:

Ձեւաբաններու համաձայն, Աւետարաններու նիւթերը, աւետարանիչներու կողմէ գրի առնուելէ առաջ, ծագում առած են քրիստոնեայ առաջին համայնքին ծոցին մէջ:

K. L. Schmidt կ'ըսէ՝ թէ Աւետարանները կազմուած են նախապէս գոյութիւն ունեցող համառօտ գրութիւններէ: Աւետարանիչներու գործը եղած է այդ գրութիւնները քովէ քով բերելով՝ խմբագրել իրենց Աւետարանները:

Հետեւաբար, կ'ըսեն, մեր աշխատանքը պէտք է կեդրոնանայ ո'չ թէ Աւետարաններու, այլ անոնցմէ առաջ գոյութիւն ունեցող գրութիւններուն վրայ:

Dibelius ուղեւոր սահմանել Աւետարաններու գրական սեռերը, զանոնք կը բաժնէ վերաւոր հինգ մասերու. Paradigmen, Novellen, Legenden, Paränesen եւ Mythen.

Bultman, ուրիշ ձեւաբան մը, իր կարգին, երկու խումբի կը վերածէ Աւետարաններու պարունակութիւնը. 1^o) խօսքերու աւանդութիւն. 2^o) Պատմութեանքներու աւանդութիւն:

Խօսքերու աւանդութիւնն ալ իր ենթաբաժանումներն ունի.

ա. Apophthegmes, որոնց կը պատկանին «հակաճառութիւններ, կենսադրական մանրամասնութիւն, եւ այլն:

բ. Տիրոջ ասացուածքները, վճիռները, մարդարէական կամ յայտնութեանական յայտարարութիւնները, եւ այլն:

Պատմութեանքներու աւանդութիւնն ալ կարելի է ենթաբաժնել.

ա. Հրաշքներու.

բ. Կենսագրական առասպելներու:

ՁԵԻ

Ձեւաբաններու համաձայն՝ «ձեւ»երը այն փոփոխութիւններն են, որոնց ենթարկուած է հարադատ աւանդութիւնը, որ առաջին քրիստոնեայ համայնքին կը ներկայացնէր Յիսուսի իսկական կեանքը եւ խօսքերը:

Ձեւաբանները կը վստահացնեն՝ թէ ուսումնասիրելով այդ «ձեւ»երը, կրնանք հասնիլ հին եւ զուտ աւանդութեան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Պարունակութիւնն ալ, ըստ ձեւաբաններուն, կը ծառայէ լաւագոյնս ճշտելու կտորի մը գրական սեռը:

Bultman, Քրիստոսի խօսքերը, իրենց պարունակութեան համաձայն՝ կը բաժնէ գլխաւոր երեք մասերու. 1^o) իմաստութեան առածներ. 2^o) մարդարէական խօսքեր. 3^o) իրաւաբանական առածներ:

ՄԻՋԱՎԱՅՐ (Sitz im Leben)

«Միջավայր» ըսելով՝ ձեւաբանները կը հասկնան քրիստոնեայ այն առաջին հասարակութիւնը, որուն մէջ ծնունդ առած եւ աճած են Աւետարաններու նախատարրերը:

Միջավայրն ալ իր ազդեցութիւնը բերած է գրական սեռերու կազմութեան վրայ:

Միշտ՝ ըստ ձեւաբաններու, քրիստոնեայ առաջին միջավայրը, ուր կազմուած են Աւետարանական զանազան տարրերը, յար եւ նման է՝ առասպելներու ծնունդ տուող միջավայրերուն:

Աւետարաններու նախանիւթերը բերանացի ըլլալով, ենթակայ եղած են փոփոխութիւններու, կրած են այլազան ազդեցութիւններ, եւ մասամբ հեռացած են իրենց սկզբնական հարադատութենէն:

Աւետարանական հին աւանդութիւնը, ուրեմն, հետզհետէ ճոխացած է նորանոր տարրերով, որոնք արդիւնք էին հաւատացեալներու ստեղծագործ երեւակայութեան եւ միջավայրի ազդեցութեան: Կրօնական ազդեցութիւնն ալ, ո՛չ միայն պաղեստինեան է, այլ նաեւ հելլենական:

Ձեւաբաններու համաձայն, առաքեալները, ինչպէս նաեւ առաջին քրիստոնեաները՝ պատմական դէպքերով եւ տուեալներով այնքան չէին հետաքրքրուել, որքան՝ հաւատքով:

Հաւատքը եւ պատմութիւնը, սակայն, ըստ ձեւաբաններուն, իրարու հետ անհաշտ տարրեր են: Հաւատացեալը եւ պատմաբանը իրարմէ տարբեր կեցուածք ունին զիրենք հետաքրքրող իրադարձութիւններուն հանդէպ: Մէկ խօսքով՝ հաւատքի ակնոցը տարբեր է պատմութեան ակնոցէն:

Ուստի, աւելորդ է Աւետարաններուն մէջ փնտռել ստոյգ պատմական դէպքեր, ժամանակագրութիւն եւ տեղագրութիւն:

Յիսուսի իրական կենսագրութիւնը չէ՛ որ տուած են մեզի Աւետարանիչները, այլ Յիսուսի շուրջ հիւստուած երեւակայածին եւ հրաշապատում առասպելներ:

Bultman յայտնապէս կը յայտարարէ՝ թէ Յիսուսի վերագրուած հրաշքները շինծու պատմութեան են, քանի որ լուրջ պատմագէտ մը չի կրնար հրաշքի գոյութիւնը ընդունիլ:

Եւ հուսկ, միշտ ըստ ձեւաբաններուն, Աւետարաններու մէջ կը պակսին նաեւ նիւթերու ամբողջականութիւն եւ քիչ բացատրութեամբ նաեւ յաջորդականութիւն:

Եզրակացելով, ըսենք՝ թէ ձեւաբաններու համաձայն, Աւետարանները կը նմանին «մոզայիք»ներէ շինուած նկարի մը, որուն զանազան մասերը, իրարմէ անկախ, տարբեր ժամանակներու ընթացքին, տարբեր ազդեցութիւններու ներքեւ պատրաստուած եւ կազմաւորուած են:

Աւետարանիչները, հետեւաբար, իրական հեղինակներ չեն Աւետարաններուն: Անոնք, աւելի ճիշտ, բանահաւաքներ են, որոնք քովէ քով բերելով Յիսուսի կեանքին, խօսքերուն եւ գործերուն վերաբերող նիւթերը, խմբագրած են Աւետարանները:

Միւս կողմէ, սակայն, միեւնոյն ձեւաբանները կը հաւաստեն՝ թէ «զրական քննադատութիւն» կոչուած մեթոտով կարելի է մաքրագործել Աւետարաններուն մէջ տեսնուող խորթ տարրերը, մատնանշել օտար ազդեցութիւնները, ջնջել հրաշապատում առասպելները եւ հասնիլ նախնական աղբիւրին, որուն մէջ կը ցոլայ Քրիստոսի հարազատ դիմագիծը:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձեւաբանները, ինչպէս ներկայացուցինք վերեւ, կը հաստատեն՝ թէ քրիստոնեայ առաջին միջավայրը, ուր կազմաւորուեցան Աւետարանական զանազան տարրերը, յար եւ նման է առասպելներու ծրարանկան զանազան տարրերը, յար եւ նման է առասպելներու նուեղ տուող միջավայրերուն: Անոնց համաձայն՝ Աւետարաններու նախանիւթերը բերանացի ըլլալով, ենթակայ եղած են փոփոխութիւններու, օտար ազդեցութիւններու. հետզհետէ ճոխացած են նորանոր տարրերով, որոնք արդիւնք էին հաւատացեալներու ստեղծարանոր տարրերով, որոնք արդիւնք էին հաւատացեալներու ստեղծագործ երեւակայութեան. անոնք՝ առաջին քրիստոնեաները, դէպքերու պատմականութենէն աւելի՝ իբր թէ հետաքրքրուած էին հաւատքով:

Արդ՝ ձեւաբաններու վերոյիշեալ հաւաստումները չեն համապատասխաներ իրականութեան:

Քրիստոնեայ առաջին համայնքը ո՛չ թէ անկազմակերպ, այլ առաքեալներու գլխաւորութեամբ եւ անոնցմէ կառավարուած հասարակութիւն մը եղած է:

Ճիշտ է՝ թէ Քրիստոսի մահէն ետք, գործնական կեանքին մէջ, նորանոր հարցեր մէջտեղ ելան. այսպէս, կուռքերուն զոհուած միսը նորանոր հարցեր մէջտեղ ելան. հեթանոսներուն հետ յարաբերիլ թէ ոչ, հեթանոսե՞լ թէ չուտել, հեթանոսներուն հետ յարաբերիլ թէ ոչ, շաբա՞թը պահել թէ կիսնոսութենէ՞ զարձոյնները թիփատե՞լ թէ ոչ, շաբա՞թը պահել թէ կի-

րակին: Տարակույսներ կային Աստուծոյ թաղաւորութեան, աշխարհի վախճանին մօտաւորութեամբ կամ հեռու ըլլալուն շուրջ, հին օրէնքներու ամբողջական պահպանումի մասին, եւ այլն...:

Սակայն, ով որ «Գործք Առաքելոց» գիրքը կարդայ, շուտով կը տեսնէ՝ թէ առաքելները, որոնք ականատես եւ ականջալուր վկաներն էին Քրիստոսի կեանքին, գործերուն եւ խօսքերուն, գլուխ ու նենալով Պետրոս Առաքելապետը, ժողովներ կը գումարեն վերոյիշեալ տարակուսելի հարցերը լուծելու համար, հաւաքաբար նամակ կը շարադրեն եւ կը ղրկեն հաւատացեալներուն, օրէնքներ կը հրատարակեն, սարկաւազներ կ'ընտրեն՝ որոշ պաշտօններու համար, քարոզիչներ կը ղրկեն ուրիշ քաղաքներ³, մօտէն կը հսկեն՝ որ իրենց վարդապետութեան մէջ օտար եւ փոքր տարրեր չսպրդին:

Աւետարանը՝ վարդապետութիւն մը ըլլալէ առաջ, իրողութեան մը արձագանքը, հաստատումը, վկայութիւնն է:

Նոր Կտակարանին մէջ, 150 անդամներէ աւելի կը յիշուին վկայ, վկայութիւն, վկայել բառերը: Առաքելները ճշմարիտ վկաններն են Յիսուսի, որ ինչպէս կ'ըսէ. «ինծի վկայ պիտի ըլլաք Երուսաղէմի, բոլոր Հրէաստանի, Սամարիոյ մէջ եւ մինչեւ աշխարհիս ծագերը»⁴:

Յուդա մատնիչ առաքելին տեղ, առաքելները կ'ընտրեն Մատթիան, որ ականատես վկայ եղած է Յիսուսի⁵:

Արդ, վկայ՝ կը նշանակէ անձ մը, որ ականատես եւ ականջալուր ըլլալով եղելութեան մը, դէպքի մը, կը հաստատէ այդ եղելութեան, դէպքին իրականութիւնը: Առաքելներու, հէքեաթներու համար վկաններ գոյութիւն չունին:

«Աւանդութեան» գաղափարը, որով տոգորուած էին առաքելները, ուրիշ փաստ մըն է, հերքելու համար ձեւապաշտներու այն կարծիքը՝ թէ առաջին քրիստոնեաները իրենց երեւակայութեամբ հնարած ըլլան Աւետարաններուն մէջ պատմուած նիւթերը:

Պօղոս Առաքելալ ստէպ կը շեշտէ աւանդութիւնը անեղծ պահելու, չփոփոխելու, նոյնիսկ կէտ մը վրան չաւելցնելու անհրաժեշտութիւնը: Անիկա Կորնթացիներուն ուղղած Ա. նամակին մէջ կը գրէ. «Ձեզի աւանդեցի ինչ որ ստացայ»⁶, կամ «Ստացայ, ինչպէս

3. Գործք Առաքելոց գիրքին մէջ կը կարդանք որ Պետրոս եւ Յովհաննէս առաքելները շրջապտոյտի կ'ելլեն զանազան քաղաքներ (Գործք Առաքելոց, Բ. 14-17): Ուրիշ անգամ, Պետրոս առաքելալ առանձին կը շրջի՝ զանազան համայնքներու այցելութիւններ տալով (Գործք Առաքելոց, Թ. 32-42): Նմանապէս Բառնաբաս ալ Երուսաղէմէն Անտիօք կը ղրկուի (Գործք Առաքելոց, ԺԱ. 22) եւն...:

4. Գործք Առ. Ա. 8:

5. Գործք Առ. Ա. 21:

6. Ա. Կորնթ. ԺԵ. 3:

նաեւ ձեզի աւանդեցի»⁷: Ուրիշ տեղ մը կը գրէ. «Երբ մենք կամ երկինքէն հրեշտակ մը ձեզի քարոզէ Աւետարան մը, որ տարբեր ըլլայ անկէ՝ որ ձեզի քարոզեցինք, նզովեալ ըլլայ: Ինչ որ արդէն ձեզի ըսի, նորէն կ'ըսեմ. եթէ մէկը քարոզէ Աւետարան մը՝ որ տարբեր ըլլայ անկէ, որ ստացաք, նզովեալ ըլլայ»⁸:

Միեւնոյն Պօղոս Առաքելալ Տիմոթէոսի ուղղած Ա. նամակին մէջ կը յորդորէ իր աշակերտը՝ որպէսզի «գզոյ ըլլայ պառանդութեան առասպելներէն»⁹:

Քրիստոնէական կրօնը եւ անոր հետեւորդները հակառակ էին սուտին, կեղծիքին, առասպելին: Ինչպէս կարելի է հաստատել թէ այդ երանդուն եւ իրենց կրօնքին ամէնէն հաւատարիմ առաջին քրիստոնեաները՝ առասպելներ տեղծած ըլլան, եւ այդ առասպելին համար ալ շատ անգամ իրենց կեանքը զոհած:

Սխալ է ըսել՝ թէ առաջին քրիստոնեաները հեռու եղած են պատմական մտահոգութիւններէ:

Աւետարանիչներէն Ղուկաս՝ յայտնի կերպով կ'ըսէ. «Ես ալ որ սկիզբէն ի վեր ամէն ինչ խնամքով հետազօտեմ էի, փափաքեցայ կարգով գրել ձեզի... որպէսզի ճանչնաս ճշմարտութիւնը այն վարդապետութեան, որուն աշակերտացար»¹⁰: Եւ դարձեալ, «Շատեր ձեռնարկեցին մեր մէջ կատարուած դէպքերու պատմութիւնը շարադրել, ինչպէս աւանդեցին մեզի անոնք, որոնք սկիզբէն ականատես եւ պաշտօնեաներն եղան խօսքին»¹¹:

Ուրեմն, Ղուկաս, խնամքով հետազօտելէ ետք է որ գրած է ո'չ թէ առասպելներ, այլ պատմական այն դէպքերը, ա'յնպէս՝ ինչպէս աւանդած են սկիզբէն ականատես եղող վկանները:

Նմանապէս Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք. «Այս այն աշակերտն է, որ կը վկայէ այս բաներուն, եւ որ գրած է ասոնք, եւ գիտենք՝ թէ իր վկայութիւնը ճշմարիտ է»¹²: Իսկ իր առաջին նամակին, առաջին տողերուն մէջ կը շեշտէ՝ թէ իրենք ականատես եղած են Բանին Աստուծոյ, իրենց ձեռքերով չօղափած են զայն. եղած են կը վկայենք եւ կը պատմենք ձեզի...: Ինչ որ տեսանք «Տեսանք եւ կը վկայենք եւ կը պատմենք, որպէսզի դուք ալ մեզի հետ հաղորդութիւն ունենաք»¹³:

Նմանապէս Պետրոս Առաքելալալ, խօսքն ուղղելով առաջին

7. Ա. Կորնթ. ԺԱ. 23:

8. Գաղատ. Ա. 8-9:

9. Ա. Տիմ. Դ. 7:

10. Ղուկ. Ա. 3-4:

11. Ղուկ. Ա. 1-2:

12. Յովհ. ԻԱ. 24:

13. Ա. Յովհ. Ա. 1-3:

հաւատացեալներուն, կը շեշտէ՝ որ իրենք ո՛չ թէ յերկրածոյ առասպելներ կը քարոզեն, այլ ականատես վկաններն են Յիսուս Քրիստոսի մեծութեան. «Զեպի ճանչցնել տուինք Տէր Յիսուս Քրիստոսի զօրութիւնը եւ զալուստը, ո՛չ թէ հաւատացած ըլլալով շինծու առասպելներու, այլ որովհետեւ անոր մեծութեան ականատես եղած ենք»¹⁴:

Ճիշտ է թէ առաքեալներու քարոզութիւնը ժողովրդական էր, որովհետեւ ո՛չ միայն իրենք ժողովրդական խաւերէն ընտրուած էին ընդհանրապէս, այլ նաեւ առաւելապէս ժողովրդական խաւերուն է որ կը քարոզէին Աւետարանը:

Առաքեալները գրադէտներ կամ բանասէրներ չէին անշուշտ: Անոնց գլխաւոր նպատակը չէր Քրիստոսի գիտակամ վարքը գրել, այլ քարոզել պարզ եւ հասկնալի ձեւով՝ ինչ որ տեսած եւ լսած էին Յիսուսէն, որ Աստուծոյ խոստացուած եւ մարգարէներէն դուրսուած Մեսիան էր, փրկիչը մարդկութեան, ազատարարը մեղաւորներուն:

Արդ, աշխարհի չորս ծագերուն, փրկադործութեան այս մեծ Աւետիւնը քարոզելու ատեն, բնական է թէ առաքեալները նկատի առնէին իրենց անմիջական չրջապատը, ունկնդիրներուն դարգացումի մակարդակը, օրուան պահանջները, եւ անոր համեմատ, առաւել կամ նուազ չափով, շեշտը դնէին Քրիստոսի ա՛յս կամ ա՛յն խօսքին կամ առակին վրայ, յիշատակէին ա՛յս կամ ա՛յն հրաշքը կամ դէպքը, որպէսզի աւելի տեղին ըլլար իրենց խօսքը եւ օգտակար՝ ունկնդիրներուն: Պետրոս կամ Պօղոս Առաքեալները, օրինակի համար, տարբեր ձեւով կ'արտայայտուէին, երբ իրենց դիմացը գտնուէին հրեայ քրիստոնեաներ. տարբեր լեզու կը գործածէին՝ երբ կը քարոզէին հեթանոսութենէ դարձի եկած քրիստոնեաներուն: Քարոզիչի մը առաւելութիւններէն մէկն է յարմարիլ ներկաներու հոգեբանութեան, մտայնութեան եւ անոնց կարօտութիւններուն:

Բնական է նաեւ որ իւրաքանչիւր առաքեալ կամ քարոզիչ՝ իր նկարագրին, իր մտայնութեան համաձայն քարոզէր Աւետարանը:

Առաքեալները, որոնք ականատես եւ ականջալուր վկաններն ըլլալով Քրիստոսի կեանքին եւ գործունէութեան, իրենց քարոզութեան մէջ, եթէ ընդհանուր եւ հական նիւթերու շուրջ համաման էին իրարու, զարմանալի չէ, սակայն, եթէ մանրամասնութիւններու եւ երկրորդական կէտերու շուրջ, երբեմն տարբերէին իրարմէ՝ զանոնք նկարագրելու կամ նորանոր մանրամասնութիւններ տալու մէջ:

Ինչպէս տեւէ մարդ, նոյնպէս իւրաքանչիւր առաքեալ, կ'ունենար իր նախասիրած նիւթերը: Առաքեալ մը կրնար խորապէս տպաւորուած ըլլալ Յիսուսի այսինչ խօսքէն կամ գործէն, մինչդեռ ու-

րիչի մը ուշադրութիւնը կեդրոնացած կրնար ըլլալ տարբեր նիւթի մը շուրջ: Միեւնոյն նախասիրութիւնները չունէին, օրինակ, Պետրոս եւ Յովհաննէս Առաքեալները: Վերջինս՝ կոչուած սիրոյ առաքեալ, շատ հաճոյքով եւ երկար կը խօսի սիրոյ մասին Քրիստոսի կատարած արտայայտութիւններուն շուրջ՝ քան ուրիշ որեւէ առաքեալ:

Հոգեբանական բոլոր այս ազդակները նկատի առած, շատ բնական կը գտնենք որ աւետարանական՝ ըլլա՛յ բերանացի, ըլլա՛յ գրաւոր աւանդութեան մէջ, տարբերակներ գտնուին, տարբերակներ՝ որոնք հակասական չեն իրարու, որոնք Քրիստոսի վարդապետութեան հոլութեան չեն դաշխի, եւ շատ անգամ իրար կը լրացնեն:

Դարձեալ՝ բնական կը գտնենք, որ քարոզիչը շատ անգամ համառօտ է, խտացնէ իր ըսածները, հական մասերը միայն շեշտելով, որպէսզի աւելի դիւրին ըլլայ զանոնք միտք պահելը:

Միեւնոյն նպատակով եղած վրնայ ըլլալ նաեւ մէկտեղումը՝ Յիսուսի խօսքերուն, առակներուն կամ հրաշքներուն, որոնք թէեւ տարբեր ժամանակներ, տարբեր տեղեր ըսուած են կամ կատարուած, բայց Աւետարանի քարոզիչները եւ յետոյ Աւետարանիչները, զանոնք խմբաւորելով, հաւաքածոյի ձեւ տուած են¹⁵:

Գալով Աւետարանիչներուն՝ անոնք պարզ ընդօրինակողներ չէին: Ճիշտ է՝ թէ անոնք չունէին իսկական առումով պատմաբանի մը բոլոր յատկութիւնները: Անոնք չունէին պատմութեան այն ըմբռնումը՝ յոյն եւ լատին պատմիչներու, որոնք իրենց պատմադրութիւններուն մէջ ջանացած են դնել որոշ ժամանակագրութիւն մը եւ դէպքերու կարգաւոր դասաւորում:

Աւետարաններուն մէջ ստեպ գործածուած՝ ժամանակի եւ տեղւոյ սա անորոշ բացատրութիւնները, «Օր մը», «Այն ատեն», «Այն օրը», «Այն ժամանակ», «Երբ քաղաքներէն մէկուն մէջ կը գտնուէր» (առանց քաղաքին անունը տալու), եւ այլն, ցոյց կու տան՝ թէ Աւետարանիչները շատ ալ կարեւորութիւն չէին տար ժամանակագրութեան եւ տեղագրութեան:

Ճիշտ է դարձեալ, որ Աւետարաններէն առաջ հրապարակի վրայ գոյութիւն ունէին կարճ եւ համառօտ գրութիւններ՝ Յիսուսի խօսքերուն եւ գործերուն մասին: Շատ հաւանաբար, Ղուկաս Աւետարանիչ՝ սա տողերով, «Քանի որ շատեր ձեռնարկեցին մեր մէջ կատարուած դէպքերու պատմութիւնը շարադրել»¹⁶, կ'ականարկէ նաեւ վերոյիշեալ գրութիւններուն, որոնցմէ, ինչպէս ըսինք Աւետարա-

15. Տե՛ս Մտթ. Ե-է, Ժ, ԺԳ. 1-35, Մրկ. Դ. 1-34, Ը:

16. Ղուկ. Ա. 1:

նիչներու մասին խօսուած ատեն, օգտուած են անոնք, իրենց Աւետարանները գրած միջոց:

Աւետարանիչները, սակայն, ձեռքի տակ ունենալով հանդերձ վերոյիշեալ գրութիւններէն մասեր, անոնցմէ առած են այն՝ ինչ որ իրենց մտադրած ծրագրին վր ծառայէր:

Սոյն գրութիւններէն զատ, Աւետարանիչները օգտուած են նաեւ բերանացի աւանդութենէն, Առաքեալներու քարոզութիւններէն (Մարկոս՝ Պետրոսէն, Ղուկաս՝ Պողոսէն) եւ այլն, երբեմն զեղչելով, երբեմն համառօտելով կամ համադրելով: Բայց ասիկա չի՝ նշանակեր թէ Աւետարանիչները առանց քննութեան եւ ընտրութեան օրինակած են՝ ինչ որ իրենց ձեռքը անցեր է:

Որով կրնանք անվարան ըսել՝ թէ Առաքեալները, ինչպէս նաեւ առաջին քրիստոնեաները, եթէ չունէին գիտական իմաստով առնուած «Պատմութեան» մտահոգութիւնը, ունէին, սակայն, «պատմական» մտահոգութիւնը, իրականութիւնը մեղի հարազատօրէն աւանդելու գիտակցութիւնը¹⁷:

Սխալ պիտի ըլլար, անշուշտ, Աւետարանիչներէն սպասել լուսանկարչական հաւատարմութեամբ գրուած Քրիստոսի կենսագրութիւն մը: Պէտք ենք ընդունիլ, սակայն, որ իւրաքանչիւր Աւետարանիչ ունեցած է իր որոշ ծրագիրը եւ ատոր համաձայն, նկատի ունենալով իր ընթերցողները, անոնց ապրած միջավայրը եւ մտայնութիւնը, չարագրած է իր Աւետարանը, իր գործին վրայ դրոշմելով իր անձնական կնիքը, ոճը եւ լեզուն:

Աւելցնենք նաեւ որ աւետարանական բերանացի աւանդութիւնը երբ սկսաւ գրի առնուիլ, Յիսուսը տեսնողներէն շատեր տակաւին ողջ էին:

Պողոս առաքեալ, 57 թուականին, Եփեսոսէն՝ Կորնթացիներուն կը գրէ. Յիսուս «Երեւցաւ Կեփայի եւ ասպա տասներկու առաքեալներուն, յետոյ երեւցաւ աւելի քան հինգ հարիւր եղբայրներուն միանգամայն, որոնցմէ շատեր կ'ապրին մինչեւ հիմա»¹⁸:

Քսան-երեսուն տարուան ընթացքին, իրական դէպքերը հէքեաթի չեն վերածուիր, մանաւանդ՝ երբ անոնց ակնհայտեան վկաները ողջ են տակաւին:

Կայ նաեւ ձեւաբաններու հետեւեալ փաստարկութիւնը: Աւետարաններուն մէջ կը հանդիպինք այնպիսի նիւթերու, որոնց գրական սեռը կամ ներկայացնելու ձեւը կը գտնենք նաեւ հրէական եւ հելլենական դրականութեան մէջ:

Ասկէ պէտք է հետեւցնել, կ'ըսեն ձեւաբանները, որ առաջին

քրիստոնեաները շատ բան փոխ առած են ուրիշ ազգերու կրօնքներէն եւ դիցաբանութենէն:

Այսպէս, օրինակի համար, յոյն դիցաբանութեան մէջ ալ չաստուածները երկրի վրայ կ'երեւին, շատերու ճակատագիրը կը կառավարեն եւ միջամուխ կ'ըլլան մարդոց գործերուն:

Հեթանոսներու պատմութեան մէջ ալ կը յիշատակուին սրբաւիպներ, ուր ժողովուրդը չաստուածներէն պատգամներ կը ստանար եւ տեղի կ'ունենային հրաշապատում դէպքեր:

Սակայն, իսկոյն կ'ուզենք անդրադարձնել թէ նմանութիւնը չի նշանակեր նոյնութիւն:

Քրիստոնէութեան եւ միւս կրօնքներու միջեւ եթէ կայ նմանութիւն մը, ատիկա ալ աւելի նիւթը ներկայացնելու դրական ձեւին մէջ է թերեւս, եւ ո'չ թէ նիւթերու փոխառութեան մէջ:

Քրիստոսի կրօնքը եթէ բաղդատելու ելլենք միւս կրօնքներուն հետ, նախ եւ առաջ՝ կը տեսնենք որ բոլորովին տարբեր դիմագիծ եւ իւրայատուկ նկարագիր ունի եւ ամբողջովին կը տարբերի միւսներէն:

Հրաշքներու պարագային ալ մեծ է տարբերութիւնը, մանաւանդ երբ նկատի առնենք հրաշքներու շարժառիթը եւ հրաշք ընողին գերմարդկային դիտաւորութիւնը:

Յետոյ, ինչպէս ըսինք, Առաքեալներուն խիստ հսկողութիւնը՝ նորամուտ տարբերութեան մէջ, չէր թոյլատրեր նման փոխառութիւններ:

Հրէական կրօնքին ազդեցութիւնը, որ վը գտնենք Քրիստոնէական վարդապետութեան մէջ, առաջ կու գայ Հին եւ Նոր Կտակարաններու միջեւ դոյութիւն ունեցող սերտ կապակցութենէն:

Սակայն, հակառակ ասոր, Քրիստոսի կրօնքը յստակօրէն կը դատուի հրէականէն եւ շատ անգամ ալ կը հակադրուի անոր:

Ահա՛ Յիսուսի խօսքերէն քանի մը բացատրութիւններ. «Լսած էք որ ըսուեր է հիներուն, մի՛ սպաններ...: Բայց ես կ'ըսեմ ձեզի...»: «Ըսուած է նաեւ. ո'վ որ իր կինը արձակէ՝ թող ապահարզի...»: «Ըսուած է նաեւ. ո'վ որ իր կինը արձակէ՝ թող ապահարզի...»: «Ըսուած է. աչք՝ աչքի դէմ, ախոյ՜ ախոյ՜ դէմ: Բայց ես կ'ըսեմ...» (Մտք. Ե-2):

Այս եւ նման բացատրութիւններով, Քրիստոս առաքեալներուն սորվեցուց իր ուրոյն վարդապետութիւնը, որ անխուսափելի որոշ նմանութիւններով հանդերձ, մեծապէս կը տարբերի Մովսիսական աւանդութիւններէն:

Եղբայրացնելով, կրնանք ըսել որ ձեւապաշտներու կատարած դործը աւելի քանդիչ եղաւ՝ քան շինարար: Անոնց կիրարկած մեթոդը, որ «քննական» պիտակը կը կրէ, մեր օրերու մտայնութեամբ ուղեց դատել ասկէ քսան դարեր առաջ ապրող մարդոց գործերն ու

17. Nouveau Testament, Introduction à la Bible, II, 3^e Edition, էջ 314:

18. Կորնթ. ԺԵ. 6:

խօսքերը: Հետեւաբար՝ հեռացաւ իրականութենէն եւ ինկաւ չափազանցութիւններու մէջ:

Կը պատմուի թէ Պրոկոստոս (Procaste) անունով աւաղակապետ մը, ճամբորդները կողոտելէ ետք, զանոնք երկաթէ անկողինի մը վրայ պառկեցնելով, անոնց ոտքերը կը կտրէր՝ եթէ անոնք անկողինէն աւելի երկար ըլլային: Իսկ կարճ ըլլալու պարագային՝ զանոնք չուանով կը քաշէր, մինչեւ որ անոնք անկողինին երկարութիւնը ունենային:

X. Léon - Dufour, սրամտօրէն, Պրոկոստոսի ըրածին կը նմանցնէ ձեւապաշտներու կատարած գործը: Զեւապաշտները, իրենց վարկածներով եւ իմաստասիրական ու ընկերաբանական սկզբունքներով անդամատեցին Աւետարանները:

Տանք քանի մը օրինակներ:

Զեւաբանները սապէս տրամաբանեցին. չափաւորութիւնը կամ պարզութիւնը՝ նախնականութեան եւ հնութեան նշան է. մանրամասնէն: Առնենք, օրինակի համար, Աւետարաններուն մէջ յիշուած հարուստին պատմութիւնը: Մարկոս պարզապէս կ'ըսէ. «Հարուստ մարդ մը վաղելով եկաւ, ծնրադրեց անոր (Յիսուսի) առջեւ եւ հարցուց...»¹⁹:

Ղուկաս աւելի մանրամասնելով կ'ըսէ՝ թէ այդ հարուստը իշխան մըն էր. «Իշխան մը հարցուց Անոր...»²⁰:

Մատթէոսի մօտ, այդ հարուստ իշխանը կը ներկայանայ որպէս պատանի. «Պատանին երբ այս խօսքերը լսեց, տրտմած գնաց»²¹:

Զեւաբանները, իրենց սկզբունքին համաձայն, կ'ըսեն՝ թէ հարուստ մարդուն իշխան եւ պատանի ըլլալու հանդամանքները յետոյ աւելցուած են. ուստի, պէտք է մաքրագործել այդ մանրամասնութիւնները՝ որպէս անհարազատ տարրեր:

Դարձեալ, ձեւաբաններուն համաձայն, Աւետարաններուն մէջ կան խօսքեր, որոնք լրացուած են ի նպատակ առաջին քրիստոնեաներուն: Այդ խօսքերն ալ յետոյ աւելցուած պէտք է ըլլան, կ'ըսեն:

Օրինակ. Յիսուս կ'ըսէ. «Միթէ կարելի՞ է որ հարսնեւորները ծով պահեն, երբ փեսան իրենց հետ է. քանի փեսան հետերին է՝ չեն կրնար ծով պահել. բայց պիտի գան օրեր՝ երբ փեսան իրենցմէ պիտի վերցուի. այն ատեն պիտի պահեն»²²:

Այս խօսքերուն առաջին մասը Յիսուսի հարազատ խօսքերն են եւ՝ կարծէք ծովապահութեան դէմ քիչ մը աննպաստ բացատրութիւն մըն է: Իսկ երկրորդ մասը, որ է «բայց պիտի գան օրեր՝ երբ փե-

19. Մրկ. Ժ. 17:

20. Ղուկ. ԺԸ. 18:

21. Մտթ. ԺԹ. 22:

22. Մրկ. Բ. 19-20:

սան իրենցմէ պիտի վերցուի. այն ատեն պիտի պահեն», ձեւաբաններուն համաձայն, առաջին հասարակութեան կողմէ աւելցուած է, որպէսզի արդարացում գտնէ առաջին քրիստոնեաներուն ծով ընդհեղու սովորութիւնը:

Հետեւաբար, ըստ ձեւաբաններուն, պէտք է Աւետարաններէն վերցնել այդ տողերը, որպէս յետոյ աւելցուած խօսքեր:

Եւ այսպէս, առանց համոզիչ փաստերու, խորթ եւ օտարամուտ տարրերը մաքրագործելու նպատակով, ձեւաբանները, գրեթէ տող առ տող կտրատեցին Աւետարանիչներու կողմէ մեզի փոխանցուած Քրիստոսի գործերը, հրաշքները, խօսքերը եւ առակները:

Զեւաբանները, իրենց այս կործանարար գործին հետեւանքով, իրենց իսկ մէջ, շատ մը կէտերու շուրջ համաձայնութեան չյանգեցան, ոմանք ծայրայեղութիւններու մէջ ինկան, ուրիշներ, ինչպէս V. Taylor, միջին ու չափաւոր ճամբայ մը բռնելով՝ աւելի մօտեցան աւանդական ուսուցումին:

Զեւաբաններու դպրոցը, չըջան մը աղմուկ հանելէ ետք, օրէ օր կորսնցուց իր հետեւորդներուն թիւը. իր սկզբնական ու երբեմնի հմայքն ալ մարեցաւ:

(Շար. 12)

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

Résumé

LE CHRIST A LA LUMIERE DE LA SCIENCE

«L'ECOLE DES FORMES»

(Suite, v. «Bazmavep», 1978, Nos 1-2, pp. 184-194)

(P. EPHREM DER-GHAZARIAN)

L'A. présente dans cette partie de son étude un exposé synthétique de l'Ecole des formes, comme elle s'est révélée historiquement dans les ouvrages de ses principaux représentants, tels que M. Dibelius, K. L. Schmidt, R. Bultman, M. Albertz, G. Bertram.

Après un examen détaillé des objections soulevées par ces chefs de l'Ecole contre la crédibilité des Evangiles comme des témoignages authentiques du Christ historique, il prend en considération les aspects valables de cette Ecole, pour remonter à la reconstitution du milieu authentique où les Evangiles sont nés et qui reflétait, en toute évidence, la vie et la doctrine du Christ historique.